

«ՀԱՅ ՄԱՐԴԸ՝ ՀԱՅ ԳԻՐՔԻՆ ԴԻՄԱՑ...»

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԱՌԹԻԽԱՍ, 1990

Գիրքն այսօր սփռուած աշխարհքով մէկ, իր լոյսն է տարածել մարդկութեան հոգիներէ մէջ: Եթէ մէկ րոպէ մտածենք, որ աշխարհում գիրք ու գրականութիւն գոյութիւն չունենար, արդեօք ի՞նչն էր կարող բռնել դրա տեղը:

Լստ մեր կարծիքի՝ ոչինչը, որեւէ մի այլ բանով չէր լինել փոխարինել նրան, կամ գէթ մասամբ բռնէր դրա տեղը ու մարդու հոգիներէ մէջ թողնէր այն ազդեցութիւնը, ինչ բազմապիսի ձեւերով՝ գիտութեամբ ու փիլիսոփայութեամբ, բանաստեղծութեամբ ու արձակով եւ այլ գրական զանազան ձեւերով, որ այն տալիս է մարդուն:

Արդեօք որեւէ բան կարող է բռնել ջրի, լոյսի, կրակի կամ օդի տեղը. վստահաբար ո՛չ. ուրեմն նոյն ենք կարող ասել նաեւ գրքի համար:

Գարեգին Բ. Կաթողիկոսի «Հայ մարդը՝ հայ գիրքիմ դիմաց...» գիրքը, նուիրուած է հէնց այս գրքերին, որոնք, ինչպէս ասինք, սփռուած ամբողջ աշխարհքով մէկ, մեր տունն ու դպրոցը եւ ուսումնական բարձրագոյն ու զանազան այլ հաստատութիւնները լցրել են իրենց տաք ու ջերմ շունչով:

Այս գիրքը հաւաքածոն է Վեհափառ Հօր, Անթիքիստում վերջին աւելի քան տասը տարիներում կազմակերպուած գրքերի ցուցահանդէսի բացման ժամանակ ասուած խօսքի: Գիրքը լոյս է տեսել 1990 թուին, Անթիքիստում, մեկնաստեղծութեամբ տէր եւ տիկին Ատոմ Թնտուկեաններին:

Եթէ մենք կարդում ենք որեւէ բովանդակութեամբ մի գիրք, ինչպիսի նիւթի մասին էլ որ դա խօսի, երբեք չի կարող ունենալ այն գրքի արժէքն ու դերը, ինչ որ իր մէջ պարունակում է Վեհափառի այս աննախընթաց բովանդակութիւն ունեցող գիրքը, որովհետեւ դա ոչ միայն խօսում է տպագրուած գրքերի մասին, ինչպէս մատենագիտական գրքերն են, այլ գրքի բուն իմաստի, դրա ունեցած արժէքի եւ որպիսութեան մասին: Հայ գիրքը Ոսկեդարից սկիզբ առնելով, իր յարաճուն վերելքով եկել հասել է մինչեւ մեզ, երբ ամբողջ հայ ժողովուրդը, ի մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, իր մտքի ու հոգու ամբողջ իմացական զօրութիւնը դրսեւորում է հայ տպագիր գրքի միջոցով:

Ինչպէս ասուեց, Գարեգին Բ. Վեհափառի այս գիրքը, բովանդակում է այն բոլոր խօսքերը, որ ասուել է գրքերի ցուցահանդէսի բացման ժամանակ, ստորեւ այդ խօսքերի խորագրերով, որոնք շատ պերճախօս են թէ ինչպիսի մտածում եւ ջերմ սէր ունի Վեհափառ Հայրը հայ գիրքի հանդէպ.

1. Հայ մարդը՝ Հայ գիրքին դիմաց...
2. Հայ գիրքը՝ Պատիւն Հայրու.
3. Հայ գիրքը՝ Պարտքը Հայրուն.
4. Հայ գիրքը՝ Ճաշնապը Հայրուն.
5. Հայ գիրքը՝ Ծանապարհը Հայրուն.
6. Հայ գիրքը՝ Ընկերը Հայրուն.
7. Հայ գիրքը՝ Հանգոյց յաւերժութեան եւ ժամանակի.

8. Հայ գիրքը՝ Զրահանդերձը Հայուն.
9. Հայ գիրքը՝ «Օճանասփիւռ» Հայութեան.
10. Հայ գիրքը՝ «Սպեղանիք» զօրաւորք.
11. Հայ գիրքը՝ Բալասանը Հայուն.
12. Հայ գիրքը՝ Ալգեստանը Հայուն.

Այս բոլոր խօսքերի մէջ, Վեհափառը, ջերմ շունչով ու զեղուն ոգով, եւ փրի-
ոտփայական վերլուծութեամբ, ներբողն է տալիս «Հայ Գիրք»ին, դրանց մէջ դնելով
նաեւ Հայրենաշունչ ոգի եւ գրքի հանդէպ ներշնչող սէր ու գորով, մէջ բերելով զա-
նազան գրիչներին կողմից թողած յիշատակագրութիւններէր. ինչպէս (էջ 11).

«Ով սիրելի եղբայր որ ես,
Զայս քեզ խրատ տամ, որ լսես,
Յորժամ գտաղս եղամակես,
Թուղթմ ք՜նով չապակամես,
Զկողմ ամողորմ ետ չի պարգես,
Համց որ կապիմ վնաս գործես,
Կամ անգէտիմ ձեռն դմես,
Խոզաց մարդկան կոխամ շիմես,
.

Կամ ի վերան գինի վաթես,
Կամ եղ եւ մոմ կաթեցըմես,
Այլ յոյժ սիրով մախախմամես,
Սրբեալ ձեռք, լաթով բռնես,
Ի հրոյ, ի ջրոյ ի գատ պահես,
Եւ ի չորայիմ տեղի դմես»:

Մէկ՝ մէջբերում եւս Վեհափառի խօսքերից (էջ 46-47).

«Հայ գիրքը՝ հայ կեանքին մէջ ի յայտ եկած ապրումներուն, տեսիլներուն,
տագնապներուն, մուսնումներուն, իրագործուած արժէքներուն, ձեռք բերուած ի-
մաստութեան առկայացումն է, մերգործական ուժակամութեամբ օժտուած եւ ոչ շտե-
մարամային կայունութեամբ յատկանշուած: Գիրքը՝ ժամանակի սպառնչ, մաշեցնող,
փռչեցնող բնութեանկան ոյժէն կը փրկէ մարդը, դառնալով ամոր յանրժաշունչ
հոգիին մշտանուագ բնարը: Մարդուն անէացող ուղեղին, կազմալուծուող սրտին,
բայժայուող կամքին, կմախացող ձեռքին, կարկամող լեզուին ու մարդող շրթնմէին
շնորհաստեղծ մուսնումներուն փրկութիւնն է գիրքը, մարդէն ետք, մարդուն կեանքը
երկրին վրայ առկայացնող եւ մերշնչական աղբիւրի վերածող»:

Հայը սիրել է գիրքը, հասցրել անգամ պաշտամունքի աստիճանին, յատկապէս
այն օրերին, երբ դեռ չկար տպագրական գիւտը եւ գիրքը գրուած էր ձեռքով:

Բայց կայ նաեւ մերօրեայ օրինակը, վկայ՝ այն կանայք, որ իրենց ինչքերը ցած
դնելով «Մշոյ Ճառընտիր»ը փրկեցին կորուստից:

Պէտք է կարգաւ Վեհափառի գիրքը. մէկ անգամ եւս հաղորդուելով «Հայ Գիրք»ով
եւ աշխատել միշտ սիրել, փայփայել ու գուրգուրալ նրաց քանի որ՝

Գիրքը մի գանձ է անկորնչելի,
Աղբիւր գիտութեան եւ իմաստութեան,
Դու սիրիւր գիրքը՝ կեանքիցդ աւելի,
Դու կը գնաս՝ բայց նա կայ յաւիտեան:

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ